ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17 մայիսի 2023թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մկրտիչ Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Ասատուր Ասատրյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման և ընտրված (հաղթող) մասնակցի որոշման մասին.

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 05.05.2023թ. հրապարակվել է www.armeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2023 թվականի մայիսի 15-ին, ժամը՝ 12:00-ին armeps համակարգի միջոցով:

1.3 ՀՀ ԱՆ «Աբովյան» և «Վանաձոր» ՔԿ հիմնարկների կարիքների համար 2023թ.-ի ընթացքում անհրաժեշտ շենքերի և շինությունների վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնման ընթացակարգի, մայիսի 15-ի ժամը՝ 12:00-ի բացման նիստում, հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետով և հիմք ընդունելով Հրավերի 8.9 կետը, որոշում էր կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, քանի որ հայտերի բացման և գնահատման ընթացքում մասնակցի հայտում արձանագրվել էին անհամապատասխանություններ Հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ N1 և N2 չափաբաժինների մասով, «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ-ի հայտում բացակայում էր Մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը: Նշված անհամապատասխանության մասին գնահատող հանձնաժողովի քարտուղարը, նույն օրը, համակարգի միջոցով, տեղեկացրել էր մասնակցին՝ «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

1.4 Մինչև «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կգնահատեր Մասնակիցների կողմից ներկայացված գնման հայտերը, հանձնաժողովի գնահատող անդամ՝ Ասատուր Ասատրյանը հանձնաժողովին հայտնեց, որ տվյալ

ընթացակարգի 2-րդ չափաբաժնի ծավալաթերթ-նախահաշվում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ (բաց թողում), մասնավորապես՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտում՝ ծավալաթերթ-նախահաշվից, համակարգչի տեխնիկական խնդրի պատճառով, դուրս են մնացել որոշ ծավալներ, բայց նախահաշվային գինը ներկայացվել է այդ դուրս մնացած ծավալների գումարները ներառված, այսինքն նախահաշվային գինը ներկայացվել է իրականից բարձր կամ պակաս ծավալներով: Նշված հանգամանքի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանումը համապատասխան զեկուցագրով ավելի առարկայական դիմելու է գնահատող հանձնաժողովին: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ տվյալ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի գնահատումը կասեցնել մինչև պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի ներկայացնելը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.5 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի 8.9 կետի համաձայն նիստի կասեցման ժամկետի ավարտը սահմանված էր մինչև 16.05.2023թ.-ի ժամը 18:00-ն: Մինչև նշված ժամկետի ավարտը՝ «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր հայտում առկա անհամապատասխանությունների շտկված տարբերակները՝ N1 և N2 չափաբաժինների մասով ներկայացրել էր հաստատված և լրացված ծավալաթերթ-նախահաշիվներն, ինչպես նաև գնման ընթացակարգի բոլոր այն մասնակիցները, որոնք հայտի ապահովումը ներկայացրել էին բանկային երաշխիքի տեսքով, մինչև 16.05.2023թ.-ի ժամը 17:00-ն ընկած ժամանակահատվածում, գնահատող հանձնաժողովին են ներկայացրել Հրավերով նախատեսված հայտի ապահովման (բանկային երաշխիքների) բնօրինակները: Նշված բոլոր փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր մասնակիցների գնման հայտերը գնահատել բավարար, բացի 2-րդ չափաբաժնից:

1.6 ՀՀ ԱՆ «Աբովյան» և «Վանաձոր» ՔԿ հիմնարկների կարիքների համար 2023թ.-ի ընթացքում անհրաժեշտ շենքերի և շինությունների վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման և ամփոփման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ-ին, որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

բ/ N 2 չափաբաժնի մասով գնահատումն իրականացնել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակ:

գ/ N 3 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Քոնսթրաքշն Գրուպ» ՍՊԸ-ին և «Պրեմիում Շին» ՍՊԸ-ին, որոնք գործում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

դ/ N 4 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ԷԴԻՆԳ» ՍՊԸ-ին, որպես ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

ե/ Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի ներկայացնելու հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում, ք. Երևան, Արշակունյաց 63 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հաձնաժողովի
Նախագահ՝ _____ Մ. Խաչատրյան

Գնահատող անդամներ
1 _____ Հ. Հովհաննիսյան

2 _____ Ա. Ասատրյան

Քարտուղար՝ _____ Ն. Աբովյան